## ՔԱՐՈԶ ԽՈՍԱԿԱՆ

# Տ. ՀՈՎԱԿԻՄ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋԻ ՏՈՆԻՆ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(14 փետրվարի 2009 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն»

Սիրելի՛ հավատացյալ քույրեր և եղբայրներ, այսօր Տեառնընդառաջ է: Մենք սկսեցինք տոնել այն երեկ՝ երեկոյան ժամերգության ժամանակ: Կատարեցինք նախատոնակ, ապա սաղմոսների և հոգևոր երգերի երգեցողությամբ Ավետարանի ընթերցմամբ կատարեցինք Անդաստանի արարողություն՝ աշխարհի չորս ծագերի օրհնության արարողություն և ապա լույսի արարողություն:

Տեառնընդառաջը մեծ շուքով է տոնում նաև մեր ժողովուրդը: Բազմաթիվ ծեսեր, պտնախմբություններ, արարողություններ են կապված Տեառնընդառաջի հետ, որը նշում են հատկապես այն ընտանիքները, որտեղ կան նորապսակ զույգեր: Այս ավանդույթը, որ մենք կատարում ենք ամեն տարի փետրվարի 13-ի երեկոյան և փետրվարի 14-ի այս Սուրբ և Անմահ Պատարագի մատուցմամբ, հիմնված է Ղուկասի Ավետարանի այն վկայության վրա, որ երբ մեր Տերը քառասնօրյա էր, երբ Նրա ծնողները, համաձայն Հին Ուխտի ավանդության, բերում են ընծայաբերելու Հին Կտակարանի տաճարին: Այդժամ նրան է մոտենում Սիմեոն անունով մի ծերունի՝ իմաստուն և հոգևոր կյանքով ապրող մի անձ, որը Ս. Հոգու առաջնորդությամբ եկել էր եկեղեցի, և նա գրկում է Աստծուն՝ մանուկ Հիսուսին, գոհություն է մատուցում Աստծուն և ասում. «Ո՜վ Տեր, խաղաղությամբ արձակիր Քո ծառային, ըստ Քո խոսքի, որովհետև աչքերս տեսան փրկությունը Քո»:

Սիրելինե՛ր, Սիմեոն ծերունին արժանի դարձավ Աստծո խոստումին, այն խոստումին, որին ձգտում էին, որի համար փափագում էին, որի համար ապրում և պայքարում էին Հին Կտակարանի բոլոր արդարները, թագավորները, մարգարեները, դատավորները: Նրանք բոլորն ապրեցին և մահացան, սակայն չտեսան Աստծո խոստումի իրականացումը, որը տեսավ Սիմեոն ծերունին: Թե ինչո՞ւ միայն Սիմեոն ծերունին արժանի դարձավ Աստծո ընտրյալ ժողովրդի մեջ տեսնելու այս խոստումի իրականացումը, շատ տեղեկություններ չկան Ավետարանում, որ ասենք, սակայն մեկ ճշմարտություն հստակ է, որ յուրաքանչյուրն իր կյանքում կոչված է հանդիպելու Աստծուն, և որպեսզի հանդիպենք Աստծուն, ամենքս կոչված ենք ապրելու Աստծո պատվիրանների համաձայն և սրբությամբ: Մեր կյանքը, որ լի է շատ հաճույքներով, հաճախ դժվարություններ է ստեղծում մեզ, որպեսզի ապրենք Աստծո պատվիրանների համաձայն և ապրենք մեր կյանքը սրբությամբ, սակայն եկեղեցու Սուրբ հայրերը սովորեցնում են. «Եթե չձգտենք սրբության և եթե չձգտենք մեր կյանքն Աստծո պատվիրանների համաձայն ապրելու, ապա չենք հանդիպի Աստծուն»:

Իսկ եթե Աստծուն չհանդիպենք, ապա մեր կյանքում կլինի հուսալքություն, հուսահատություն, կլինի հոգու սով, ինչպես բանաստեղծն է ասում, կլինի տրտմություն և բազում դժվարություններ ու փորձություններ: Օգոստինոս Երանելին իր «Խոստովանության» մեջ գրում է. «Ո՛վ Տեր, Դու ես ստեղծել ինձ Քեզ համար, և իմ սիրտը չի հանգստանա, մինչև չգտնեմ Քեզ»:

Սիրելինե՛ր, կյանքում չկա ավելի մեծ պարգև, քան Աստծուն գտնելն է, Աստծո հետ հանդիպելն է: Աստծո հետ հանդիպումը նման է այն գանձին՝ Ավետարանական առակի, որ մարդ պետք է իր ամբողջ ունեցվածքը վաճառի և այդ գանձը գնի: Ո՛չ հարստությունը, ո՛չ փառքը, ո՛չ իշխանությունը չեն կարող համեմատվել այն մեծ պարգևի հետ, որ մենք ձեռք ենք բերում Աստծո հետ հանդիպման ժամանակ: Աստծո հետ հանդիպելուց հետո, Հիսուս մանուկին գրկելուց հետո Սիմեոն ծերունին մահացավ: Նա գիտակցում էր, որ ինքը գնում է մեռնելու, սակայն նա մահը տրտմությամբ չընդունեց, այլ այն ընդունեց ուրախությամբ, որովհետև գիտակցում էր, որ իրեն հավիտենականությունն է սպասում, իրեն հավիտենական կյանք է սպասում:

Սիրելինե՛ր, Աստծո հետ հանդիպելը ամենամեծ պարգևն է մեզ համար, որը բերում է հավիտենական կյանք և երջանկություն:

Տեառնընդառաջը յուրաքանչյուրիս համար Տիրոջ հետ անձնական հանդիպում ունենալու տոնն է: Ճանապարհները բազում են, որ մեզ առաջնորդում են Տիրոջը հանդիպելու: Մենք կարող ենք Տիրոջը հանդիպել, երբ բարեգործություն ենք կատարում, երբ խնամում ենք աղքատներին, հոգ ենք տանում նրանց կամ հիվանդների մասին կամ այցելում ենք մենծահասակներին, մեր օգնությունն ենք ցուցաբերում որբերին, սակայն Տեառնընդառաջը սովորեցնում է, որ եթե այս ամենը բերում են մեզ հավատքի և ցույց են տալիս Տիրոջ հանդիպումը, ապա Տիրոջ հետ իրական և ճշմարիտ հանդիպումը տեղի է ունենում եկեղեցում, տեղի է ունենում տաճարում, երբ լսում ենք Ս. Գիրքը: Օրինակի համար ձեզ նրանք, ովքեր ծանոթ են Ս. Անտոն Մեծի վարքին, ապա տեղյակ են, որ Ս. Գիրք ընթերցելիս նա լսում էր Աստծո ձայնը, որ իրեն ասում է, եթե ցանկանում ես ժառանգել Աստծո արքայությունը, ապա վաճառիր այն ամենը, ինչ որ ունես և գանձեր կունենաս երկնքում և այդ ամենը տուր աղքատներին ու հետևիր Ինձ:

Սիրելինե՛ր, երեկ երեկոյան կատարվեց լույսի արարողություն. մենք խորանին դրված ճրագից լույս վառեցինք և այդ լույսը բոլորս տարանք մեր բնակարանները: Տարին մի քանի առիթներով կրկնում ենք այս արարողությունը: Սա կրկնում ենք Ս. Ծննդյան Ճրագալույցին, սա կատարում ենք Տեառնընդառաջի երեկոյան, սա կատարում ենք Զատկական Ճրագալույցին: Լույսը, որ մենք տանում ենք մեզ հետ, խորհրդանշում է Քրիստոսին, և լույսի վառելը եկեղեցում հանդիպում է Տիրոջ հետ, տանելով լույսը՝ մեզ հետ տանում ենք Քրիստոսի ջերմությունը մեր բնակարանները, տանում մենք մեզ հետ այն լույսը մեր բնակարանները, որը երբեք չի խավարում:

Այս օրը Տեառնընդառաջ է, կարևոր է երիտասարդ զույգերի համար, երիտասարդ ընտանիքների համար և այն մեծ դաստիարակչական նշանակություն ունի: Եվ պատահական չէ, որ Հայ Առաքելական Ս. Եկեղեցին այս օրը հռչակել է երիտասարդ զույգերի օրհնության օր: Ինչպես Աստվածածնի ծնողներն էին, ինչպես Հիսուս մանուկի ծնողներն էին,

ինչպես Հին և Նոր Կտակարանի բոլոր արդար ընտանիքներն էին, որոնք ապրում էին սրբությամբ, որոնք ամուր ընտանիք էին կառուցում, որտեղ բարեպաշտ զավակներ էին մեծանում, այնպես էլ այս տոնի պատգամն է երիտասարդ ընտանիքներին, որպեսզի ամուր ընտանիքներ կազմվեն նրանց ընտանիքների նմանողությամբ, որը դառնա մի ամուր եկեղեցի, որը դառնա նաև հանդիպման վայր, որտեղ իրենց զավակները կարող են մեծանալ առաքինի կյանքով:

Սիրելինե՛ր, մենք, որպես ժողովուրդ, շատ հաճախ տոնում ենք ավանդություններ՝ առանց անդրադառնալու դրանց իրական իմաստին, դրանց նշանակությանը, որոնք խոր քրիստոնեական արմատներ ունեն: Դրանցից մեկը հենց Տեառնընդառաջն է: Երբ մենք խարույկներ ենք վառում, երբ մեծ տոնախմբություններ ենք կատարում և շնորհավորում ենք միմյանց, հատկապես նորապսակներին առանց եկեղեցի գալու, դա ոչինչ է, դա ամբողջական կլինի և այդ ավանդությունը կհաստատվի, երբ որ այդ տոնակատարությունից հետո յուրաքանչյուր զույգ, յուրաքանչյուր նորապսակ ընտանիք գա եկեղեցի իր ուխտը կնքի Աստծո հետ և հավատարիմ լինի, որ պիտի ծառայեն միմյանց այն ձևով, ինչպես Քրիստոս ծառայում է Եկեղեցու համար և Եկեղեցին ծառայում է Քրիստոսի համար, որպեսզի այդ ընտանիքները ամուր լինեն, ինչպես Եկեղեցին և որտեղ զավակները մեծանան առաքինի վարքով՝ փառավորելով մեր Տիրոջ անունը այժմ և հավիտյանս հավիտենից. Ամեն: